

ՏՆՏԵՍ

ՀԱՅՈՒԹԻՍ Ա.Մ.ՄԵՍ.Ց

ՏԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԶԿԱՆՑ

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԱՐՁԵՍՏԱՆՈՑՆԵՐ

Մեծ խնդիր եղած է թէ արդեօք պէտք է արուիլ կանց բարձրագոյն գաստիարակութիւնն, եւ եթէ այս դրութիւնը ունի ջատագովներ, շատեր սակայն նորա հակառակ են՝ թերեւս իրաւամբ։ Դաստիարակութիւնը ըստ ինքեան ընտիր բան մ'է, այդ ոչ ոք կրնայ ուրանալ, բայց ամենին ընտիր բաները չարեաց ազրիւր կըլլան երբ անյարմար կամ անտեղի են։

Փարիզի բժշկանոյի մէջ իգական սեռի քննութեանց արդիւնքներն կը հաւասառեն թէ յիբաւի կինն ընդունակ է մարդոց պէս մտաւորական բարձր եւ տեսակ տեսակ մշակութեան։ Թող բացատիկ տաղանդներ կոմ մասնաւոր կոչում ունեցողներն իրենց կարողութիւնը մշակել եւ փայլեցնել պարապին, թէեւ ներելի չէ անոնց անդամ առանին աշխատութենց մէջ տգէտ մնալ։

Բայց աղքատ աղջիկ մը, ժողովրդեան զաւակ մը որ կարօտ է իւր ձեռաց աշխատութեամբ ապրիլ կամ գոնէ օգնել իւր ծնողաց, եթէ արհամարհէ տնական ամենակարեւոր ծանօթութիւններն, արդարեւ շատ յաւալի եւ պարսաւելի մոլորութիւն մ'է։ Եւ սառւգիւ գիտեմք թէ շատ միջակ առտիճանի ընտանեաց օրիորդներ անպատճութիւնն կը համարին տան մատակարարութեան հոգն տածել, արբեցած կամ խռուած ըլլալով այն գրութիւններէ որք վերացական գաղա-

վարներով իդական սեռի մտաւորական յաջողութեան վրայ գովեատներ կը շռայլեն :

Եւրոպիոյ մէջ մարդասէր անտեսագէտներ այս վտանգին առաջքն առնելու դիտաւորութեամբ սկսած են արհեստանոցներ հիմնել, իսկ վերջին ժամանակներս Փարփղի մէջ հաստատուեցան վեց մասնաւոր վարժարաններ ուր կուսուցուին գործնական կերպիւ տան մը վերաբերեալ ամեն աեսակ ծառայութիւնք : Եւրոպական թերթերը մեծ ուրախութեամբ կաւերեն սոյն ձեռնարկներու հաստատութիւնը եւ մանրամասն տողեկութիւններ կուտան նոցա ներքին կարգադրութեանց վերայ :

Աղջիկ մը այդ վարժարանաց մէջ ընդունուելու համար պէտք է 13 տարին լրացուցած եւ նախնական վարժարանի ուսումնելն աւարտելուն վկայական մը ստացած ըլլայ, յորմէ կը տեսնուի թէ միանգամայն մտաւորական մշակութեան կտարեալ հոգ կը տարուի :

Այդ վարժարանաց շրջանը երեք տարի կը տեւէ, եւ աշակերտուհիք իրենց կոչման համեմատ մտանաւոր ճիւղերու կը հետեւին, ինչպէս ճերմակեղինաց, լուացքի, կարի, ձեւի եւայն :

Բայց այս այլեւայլ ճիւղերին զատ՝ աշակերտուհիք պարտին տնտեկան աշխատաւութեանց եւ յատկապէս խոհանոցի արհեստին վերաբերեալ ծանօթութիւններ ստանալ:

Ուստի յաջորդաբար շաբաթը մի անգամ ութը աշակերտուհիք առօրեայ կերակուրը կը պատրաստեն ընդ հսկողութեամբ խոհարար կնօջ մը: Կերակրոց ընդարձակ ցանկ մը եղանակին համեմատ խոհանոցին մէջ կափառած է. իւրաքանչիւր աշակերտուհի ըստ իւր կարգին օրուան կերակրոց ցանկը անտի կը պատրաստէ, որ բազկանայ միշտ պարզ եւ սննդարար կերակուրներէ՝ միջաստիճան ընտանեաց մը խոհանոցի յարմար: Ահա այսպէս աշակերտուհիք իրենք կուտեն իրենց ձեռօք աղէկ կամ գէշ պատրաստուած կերակուրներն :

Աշակերտուհիք ոչ միայն պէտք է կերակուրներն եփեն, այլ պէտք է նաեւ գնեն ուտեստի վերաբերեալ իրելն . այս

կանոնի համեմատ ամեն առաւօտ ութը աշակերտուհիք իրենց խոհարար վարպետուհին միասեղ՝ վաճառանոց կերթան եւ հոն կը սովորին ճանչնալ ապրանքին ընտիրը, սկսեալ մնէն եւ նախնական նիւթերէ մինչեւ համեմները, եւ ծանօթանալ սակարկութեան արհեստին որ այնքան կարեւոր է տանտիկ-նոջ մը համար : Յիրաւի ճարտար առեւտրութեամբ մը կարող է տանտիկնը պատրաստել համեղ եւ սնուցիչ կերտկուր-ներ եւ միանդամայն խնայողութեան հրաշքներ գործել :

Վաճառանոցէն վերագառնալով աշակերտուհիք կսկսին կանաչեղջնը բստիկել, հաւերը փետոտել, միսը ջարդել, եւ այսպէս թէ ամենէն կոշտ աշխատութեանց կը վարժին եւ թէ կը սովորին այն ամեն գաղտնիքները յորմէ կախում ունի կերակուրներու ընտիր համը :

Կերակուրէն վերջը խնամքով կը պահուին այն մնացորդ-ներն որ ուրիշ եղանակաւ պատրաստուելով՝ կրնան նորէն սեղանի վերայ ներկայանալ : Վերջապէս պնակները եւ սկա-ւառակները կը լուսան, կը կարգադրեն եւ ամեն բան այն-պէս փայլուն եւ մաքսւր կընեն որ իրը թէ խոհանոցը ըն-դունելութեան սրահ մ'ըլլար :

Սոյն վարժարանաց մէջ այս եղանակաւ խոհանոցի համար եղած ծախքն այնքան փաքր է որ անհաւատալի կը թուի : Միս, հաւ, թռչուն, ձուկ, կանաչեղջն, հաւկիթ, կարագ, պտուղ, համեմեղջնք եւ ամեն ինչ որ կերակրոց պատրաս-տութեան հարկաւոր է, միայն Յ ֆրանքով կը հայթայթուին ասասը հոգւոյ համար, որոց առօրեայ արտւած կերակուրն է ապուր, երկու տեսակ կերակուր, աղանդեր եւ պտուղ. իսկ հաց եւ ըմպելիք իւրաքանչիւր աշակերտուհի տռանձինն կը հայթայթէ, եւ այնպէս կարգադրուած է որ տասը հոգւոյ համար Յ ֆրանքէն աւելի ծախս չըլլայ օրուան կերակրոց համար, այսինքն իէս ֆրանք մարդ գլուխ :

Քաղաքակրթեալ ազգաց մէջ նմանօրինակ վարժարաններ եւ արհեստանոցներ հիմնելու գովելի ջանքն քաջալերութեան արժանի է : Այսպիսի ձեռնարկ մը ազգիս մէջ սկզբնաւո-րութիւն առած է, այն է ներայի արհեստանոցը որուն հաս-աատութիւնը ուրախութեամբ սղջունած եմք եւ որուն յա-

բատեւութեան եւ ծաղկելուն համար պարտիմք ի գործ դնել
ամեն բարոյական եւ նիւթական միջոց :

Ազգին վիճակին բարւոքման համար , պէտք է համոզուիմք
թէ բաւական չէ ժողովրդեան զաւակաց կրթել միայն միտ-
քը , այլ պէտք է նաեւ ջանամք որք նոքա կարող կըլլան
պատուաւոր կերպիւ եւ խելացի եղանակաւ իրենց ապրուս-
տը ճարել : Պէտք է տղու մը մտաւոր եւ մարմնաւոր կա-
րողութիւնները միանգամայն զարգացնել որպէս զի կարե-
նան գործնական մարդիկ ըլլալ :

Ե՞րբ պիտի անհետանոյ այն վնասակար եւ կանխակալ
կարծիքը թէ 15—16 տարեկան ուսումնաւարտ պատանի մը
ալ ամեն բան սովրած է : Յաճախ մեր աշակերտք վարժա-
րանէն ելլելէն քիչ տարի վերջը կը մոռնան ինչ որ ուսած
են : Միթէ մոռնալու համար կուսանին , այս խելքի դէմ է
եւ այս է մեր վարժարանաց դաստիարակութեան ամենէն
թերի կողմէ : Մարդ իւր ամերոջ կենաց մէջ պէտք է շարու-
նակ ուսանի եւ այն օրը որ բան մը չուսանիր , այն օրը յա-
ւիտեանս կորսուած է : Ամենէն կարեւոր եւ էական կրթու-
թիւն այն է զոր կը ստանամք ընտանեկան յարկին ներքեւ ,
զոր կը ստանամք դաշտին վերայ , քաղաքին մէջ , գործա-
րաններու գրասենեակներու , վաճառանոցներու , եւ այն ա-
մեն աշխատութեան կեդրոններու մէջ ուր բազմաթիւ են
մարդիկ : Ճշմարիա դաստիարակութիւնը այն է զոր ընկե-
րութիւնը կուսայ իւր անդամոց գործնական օրինակներով .
ընկերութեան մէջ մեր ձիրքերը կը զարգանան եւ կենաց
պարտականութիւնները կատարելու կը վարժիմք , բայց քանի
երկար տարիններէ յետոյ . Մինչդեռ՝ եթէ նախնական կրթու-
թեան հետ միացընեմք մարմնաւոր կրթութիւնն՝ ոչ միայն
կը դիւրանան ասլագային մեր աշխատութիւնքն ընկերու-
թեան մէջ , այլ ի մանուկ հասակի լաւ ուղղութիւն մը ստա-
ցած ըլլալով , յաջողութեամբ կը յարատեւեմք գործնական
եւ հետեւաբար խնայողական ճամփուն մէջ :

Ուսափ նախնական վարժարաններու հետ պէտք է ունե-
նալ գործնական վարժարաններ , սյսինքն արհեստանոցներ
եւ պէտք է տմեն ջանք ի գործ դնել սոյն նպատակը իրա-

կացընելու համար, հաստատելով արհեստանոցներ ամեն ձիւ-
ղերու եւ մանաւանդ հողագործութեան համար որ մեր երկ-
րին փրկութեան միակ միջոցն է :

Մ. ԱՃԵՄԵԱՆ



ՅՈՐԴՈՐԱԿԻ

Արտաքին տեսքէն մի խարուիր ի զուր .

Գորշ, անշուք հաւուն միայն գարի տուր ,

Զի նա ալ լաւ է քան մաքրափետուր

Կարապլ :

Մէկ մ'յերկինս ուղղէ աչերդ , մէկ մ'յերկիր ,

Եւ կարկառէ միշտ մի ձեռք կարեկիր

Առ որ անկանին շաւոց իժակիր

Վիրապլ :

Յիմար կամ յամառ , անսիրտ , ամսպարիշտ

Մարդն համողելք՝ հեռի կաց անվիշտ ,

Զի հատնի աճառդ — այլ ոեւ մընայ միշտ

Արապլ :

Պարկեշտ , խելացի կոյսն ընտրէ քեզ կին ,

Զի հեշտ է շահիլ արծաթն ու ոսկին ,

Մինչ ոչինչ կարէ լեցունել գանկին

Պարապլ :

ԱՆԵՔՍԱՆԴՐ Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

1 Ակադ. 87

ՃԳՆԱՒՈՐ ՄՈՒԿԻՆ

Արեւելեան սրբոց պատմիչք կը գրեն

Թէ զզուելով աշխարհային հոգերէն ,

Առանձնացաւ մուկ մի գորշ՝

Հոլանտայի պանրի խորշ ,

Համատարած լուսթիւն խոր
 Պատէր զիրեւ շուրջ բողոք։
 Հոն առլելով այս ճգնաւոր մեր նորեկ
 Ակոայներով թաթերով այնպէս աղջկ
 Աշխատեցաւ՝ որ համբարեց քիչ օրէն
 Ճգնարանին մէջ թէ սեղան թէ պարէն.
 Ա՛լ ինչ պիտէր, եղաւ տարարտ եւ գեր շատ։
 Անոնց տայ վարձ բազմառատ
 Բարին Աստուած։
 Որք նուիրել զանձինս իրեն են ուխտած։

Բարեսլաշտին մի օր եկան
 Ողորմութիւն խնդրել վոքրիկ,
 Պատգամաւորք ազգին մլան
 Որ երթային տարաշխարհիկ
 Գտնել մի ճար
 Ծնդդէմ կատուի ցեղին շար։
 Մկնաքաղաքը պաշարէր թշնամի。
 Հարկ եղած էր մեկնիլ առանց դրամի
 Զի հայածեալ ազգին վիճակն էր թշուառ.
 Եւ գիտնալով թէ օգնութիւն անպատճառ
 Չորս հինգ օրէն կը հասնէր,
 Խնդրէին մի թեթեւ նուէր։
 Տայց մենակեացն իրենց ըսաւ. —
 « Բարեկամք իմ, այս աշխարհիս հետ բնաւ
 Այլ եւըս գործ չունիմ ես.
 Խեղճ ճգնաւոր մի ինչպէս
 Կրնայ լինիլ ձեզ նեցուկ,
 ինչ կարող է ընել, եղուկ,
 Թէ ոչ աղօթս ուղղել յերկին
 Որ օգնէ ձեր նպատակին։
 Ես կը յուսամ՝
 Աղէտից ձեր տանի խնամ»։
 Եւ ըսելով այսչափ միայն
 Դուռը գոցեց սուրբ նորընծայն։

Զով ակնարկէ , գիտէք արդեօք
Օրինակս այս մկան անհոգ .
Քահանոց մի . . . ոչ , պուտուա մի ,
Զի քահանայն կարծեմ թէ միշտ ողորմի :

Թարգմանեաց

Մ. ԱՃԵՄԵԱՆ

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ԿՈՐԵՒՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՅ ՔԱՅԱԽԻՆ ՎՐԱՅ

Քայախոը ընտանեկան պիտոյից մէջ կը գործածուի մաս-
նաւորագէս իւր հակափառեցուցիչ յատկութեանց պատճա-
ռոււ . այս յատկութիւնք այնքան աւելի օգտակար են որ-
չափ աւելի քացախական թթու (acide acétique) պարունակէ :

Բնագէտք գիտել առաջ են թէ այն քայախոը որ առ
նուազն 5% քացախական թթու չպարունակէր , ոչ միայն
պահպանութեան միջոց չկրնար լինիլ այլ ընդհակառակն մգլո-
տութիւն կը պատճառէ :

Լաւագոյն է ուստի ընտիր քացախ գործածել եւ ոչ աժ-
նութենէ հրապուրեալ՝ տկար քացախն : Բայց քացախոը կծու
լինելով՝ ընտիր լինելուն ալ նշան մը չէ միշտ , վասն զի խար-
դախուեալներ կը գտնուին , եւ յիբաւի քացախին կծու համ-
տալու համար ծծմբական թթու (acide sulfurique) կը խառ-
նեն , զոր դիւրին է ստուգել հետեւեալ կերպով :

Զառուած ջրոյ մէջ քլորիւու առ պարփամ (chlorure de ba-
րյամ) լուծելով՝ քանի մը կաթիլ անկէ լեցընելու է քացա-
խին մէջ . եթէ քացախոը չատ պլաստի , անտարակայս ծծմբա-
կան թթուով խարդախուեալ է :

ԾԹԱԱԾ ԶԵԹԸ ԼԱԽՑԲՆԵԼ

ԾԹԱԱԾ ՃԵԹԻՆ ՀՈՍՔ առնելու համար երկու եղանակ ցոյց կուտանք :

Առաջին . — 1 հօյսա ծԹԱԱԾ ճԵԹԻՆ մէջ 25 տիրհէմ մանէդիա դնելով օրը 5—6 անգամ 15 վայրկենի չափ լաւ խառնելու է : 5—6 օրէն վերջը պէտք է ճԵԹԸ մղել (սիւզմէք) :

Երկրորդ . — 8 մաս գաղջ ջրոյ մէջ 1 մաս պարզ աղ համեցուր . 5 մաս ծԹԱԱԾ ճԵԹԻՆ հետ խառնէ եւ 15 վայրկեան շարժէ . թուղ որ հանդարտի եւ յետոյ ճԵԹԸ երեսէն քաշէ : Այս գործողութիւնը 5—6 անգամ կրկնելու է :

ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆԿԱՆՅ ՍՆՈՒՆԴԸ

Բնդ հանրապէս բժիշկները կը պատառիրեն մանկանց սնընդեան համար՝ գոնէ առաջին տարին , որ եւ է ալիւրեղէն չդործածել : Մասնաւորապէս պատրաստուած այս տեսակ ալիւրները մեծաւ մասամբ օուլոյ (նիշաստա) կը պարունակեն զոր նորածիններու մարսողութեան գործարանները չեն կրնար երբէք մարսնել : Կաթն է միայն մանկանց յարմարագոյն սնունդը , եւ ուրիշ բան չի կրնար անոր տեղը բռնել : Այս բնական աննդեան առաւելութիւնն այն է որ կնոջ կաթին բաղադրութիւնն գրեթէ անվախուս է : Թէ որ հարկ ըլլոյ կովու կաթ գործածել , պէտք է ջանալ որ կարելի եղածին չափ միշտ հաւասար ըլլոյ , ոկրը առնուած եւ մանաւանդ խարդախեալ չըլլոյ :



Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Գ. Ա. Հ. Ա. Կ. Ա. Ն.

ՑԵՐԵԿ ԺԱՄԱՆԱԿ ՏՊԱՑՈՑ ՔՈՒՆ

Բնդ հանրապէս տղայք կէսօրուընէ առաջ կամ վերջը քնանալու պէտք կը զգան , բայց շատ անգամ անհոգութեամբ

զանոնք հանուեցընելու փոյթ չեն տանիր մայրերը, եւ չեն գիտեր թէ որչափ կը վնասէ աղայոց առողջութեան։

Արդարեւ այն տղայն որ հագուած կը ննջէ, քրտնած կարթըննայ եւ փոխանակ առոյգ եւ կայտառ լինելու՝ դժկամակ եւ ժանգոտ երես կըլլայ, վասն զի հանգիստ քնայցած չէ։ Եթէ հագուստին կոճակները եւ ծունկերուն կապերը գոնէ քակելու հոգ տարուած չէ, կուրծքն ու սրունքները ձնչուած եւ տանջուած լինելով՝ շարժումներն աղատ չեն ըլլար եւ մարսողութիւնը՝ ինչպէս նաեւ ընչառութիւնը շատ դժուար կըլլայ։

Ի՞նչ տարբերութիւն երբ տղայն միայն պարզ շապիով մը քնանայ, նորա քունը հանգիստ եւ ընչառութիւնը կանոնաւոր է. կայտառ եւ ծիծաղուն կը զարթնու՝ իւր փոքրիկ անդամներն հաճութեամբ տարածելով, եւ մինչեւ երեկոյ իւր զուարթութիւնը կը պահէ։

ՔԹԻՆ ԱՐԻԿՆԵԼՈՒՆ ԴԵՄ ԱԶԴՈՒ ԴԵՂ

Մոլորագոյն զորիչ կամ ծծուն թղթի (քաղաքական քեաղըթ) չոր եւ պզտիկ կտոր մը բերնի խորշին վերի կողմը՝ այսինքն քաց կամարին վրայ վակցընելով անմիջապէս քթին արիւնը կը կտրի։

Այս դարմանը թէպէտ տարօրինակ կը թուի բայց կըսեն թէ շատ տարիներէ ի վեր յաջողութեամբ գործածուած է։

ՍԱՆԴՈՒԽՆԵՐԻՆ ՎԵՐ ԵԼԼԵԼՈՒ ԱՐՀԵՍՏԸ

Զկայ մարդ մը որ քիչ մը գիրնալէն յետոյ, սանդուխներէ վեր ելած միջոցին յոգնութիւն չզգայ եւ շունչը չկրտի։

Երիտասարդք անգամ այս նեղութենէ զերծ չեն, եւ կան այնպիսիներ որ յարկէ մը վեր ելլելու ժամանակ սրտի յուղմունք եւ սասափիկ բարախումն կը զգան։

Ահա դիւրին միջոց մը ցոյց կուտանք որով կրնայ ամեն ոք ամենէն բարձր տուներուն գագաթը ելլալ առանց ամենասփոքը անհանգստութիւն մը կրելու :

Նախ սանդուխին վարը կանգ առնելով բաւական քանակ կութեամբ լաւ մը օդ չնչելու է : Յետոյ սանդուխներէն վեր ելլալու է մի միայն քթէն չնչելով :

Երկրորդ յարկը հասնելով նորէն առատ օդ չնչելու եւ վեր ելլելու է միշտ քթէն չնչելով եւ այսպէս հետզհետէ շարունակելու է : Արդարեւ սանդուխէն վեր ելած ժամանակ եթէ բերանէն չունչ առնուի , պաղ օդը գէշ ազդեցութիւն կընէ չնչափողերուն եւ թոքերուն վրայ : Ասկէ յառաջ կուգան ներքին գործարանաց բորբոքումն , ակռայի ցաւ , հարբուխ , եւայշն :

Ընդ հակառակն քթէն չնչելով օդը կը տաքնայ քթին սեղմած ծակերէն ներս մանելով : Մարդոց գործածած լայն փողալատները որով քիթն ու բերան կը ծածկեն ձմեռը , կանանց երեսին քօղը՝ կը ծառայեն նաեւ օդը տաքցընելու եւ զաելու չնչափողերուն մէջ մոնելէ յառաջ : Բայց ամենէն լաւ միջոցն է միշտ բերանը գոց պահել եւ քթէն չնչել :

Ահա այսպէս ընելով եւ մարմնոյն վերին կոճղը միշտ ուղիղ բռնելով՝ որպէս զի կուրծը ընդարձակի , կարելի է երկայն արշաւանք մընել առանց յոդնելու :

ԱԿԻՄՆԵՐԸ ՈՂՋ ԵՒ ՃԵՐՄԱԿ ՊԱՀԵԼՈՒ ՄԻՋԱՑ

Ընկուղի կանաչ կեղեւով լինդերը եւ ակռաները չփելն զանոնք ողջ եւ մաքուր պահելու միջոց մ'է , մանաւանդ թէ չխնամուած սեւ եւ ալսուա ակռաներն իսկ քիչ ժամանակի մը մէջ կրնան մաքրուիլ սոյն անվեսա դեղին գործածութեամբն :



Ա Ռ Տ Ն Ի Կ

ԽՈՆԱԼԻՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Եռանկիւն՝ կամ ձագարի (խունիի) ձեւով, տոպրակ մը կարէ եւ մէջը լեցուր մէկ հոլիսա՝ կամ եթէ տեղդ մեծ է աւելի շատ, հասարակ աղ եւ բարձրէն կալսէ՝ տակը աման մը դնելով, աղը իրեն կը քաշէ խոնաւութիւնը, ժողովուած ջուրը տոպրակին տակէն կաթելով կը լեցուի ամանին մէջ, զոր թափելու է ամեն օր :

Կիւմշեան Մեծ. Յովհաննէս էֆէնտի ուսկից առած ենք այս տեղեկութիւն, կը պատմէ թէ իրենց տան ջրհամբարը շինուած միջոցին մէջը օդ չի բանելուն պատճառաւ երկար ժամանակ պատերը թաց մնացեր են, այնպէս որ անկարելի եղեր է ջրհամբարը գործածել. զանազան վարակեաներէ ի զուր գարման վինուելէ յետոյ վերոյիշեալ միջոցը գործածեր է կատարեալ յաջողութեամբ :

ԳՐԻՉ ՄԱՔՐԵԼՈՒ ԱԺԱՆ ԳՈՐԾԻՔ ՄԸ

Գրիշները մաքրելու համար՝ սովորաբար սպոնդ կը գործածեն, Եւրոպացիք ալ՝ վրձինով կամ ասուիէ շինուած զանազան գործիքներ. ասոնց երկուքն ալ գործածութեան մասին իրենց դժուարութիւններն ունին. Կիւմշեան Յովհաննէս էֆէնտի մեզ ցոյց տուաւ փոքրիկ գաւաթ մը, որոյ մէջ լցուած էին երկու մատի բարձրութեամբ մանր սաշնաներ, զորս թռչուն որսացողները կը գործածեն. տեսանքոր գրիչը՝ գործածութենէ անմիջապէս յետոյ, սաշմաներու մէջ խոթել հանելով կատարեալ կը մաքրուի :

ԱԶՆԻՒ ՉՈՒԽԱՆԵՐԸ ԿԱՄ ԲՐԴԻ ՍՍԻԱՆՆԵՐԸ ՄԱՅՐԵԼՈՒ
ԿԵՐՊ

Անձրեւի ջրոյ մէջ օճառախոս (չօյէն) խաշելով՝ չուխայէ կամ բրդէ հագուստները լուանալու է :

Մէկ հօնա ջրոյ մէջ 10—12 տիրհէմ օճառախոս դնելու է :

Այս կերպով ամենաբարակ հիւսուած՝ եւ մինչեւ անգամ մետաքսէ կերպաներն ճերմակ կ'ըլլան, չեն դեղնիր եւ չեն քաշուիր :

Օճառախոտը կրնայ նաեւ երեսի եւ ձեռաց լուացման գործածուիլ վասնդի սովորական օճառի պէս մարթին չմւասեր :

ԴԻՄԱՑԿՈՒՆ ԹՈՒՂԹ

Ասիտ սիւլֆիւրիք (acide sulfurique) ընտիր աեսակէն կիսուակէս ջրով խառնելէ յետոյ երբ ալարդ թուղթը մէջը թրջես՝ կ'ըլլայ կաշիի նման զօրաւոր թուղթ մը, որոյ վրայ լաւ կրնայ գրուիլ:

ՄԿՆԵՐՈՒ ՀԱԼԱԾՈՒՄՆ

Ի պատասխանի թիւ 55 հարցման

Քլոռիւռ տը շօ (chlorure de chaux) խիստ աժան նիւթ մ'է, թէպէտ չէ կարող միները սատկեցընել, սակայն նորա հոտէն այդ կենդանիները չատ կը գարշին եւ կը հեռանան որչափ որ հոտը տեւէ: Բաւական է միներու բացած ծակին մէջ գնել այս նիւթը իբրեւ փոշի կամ ջրախառն եւ անմիջապէս միները անյայտ կ'ըլլան:

ՄՐՋԻՒՆՆԵՐԸ. ՀԵՌԱՅՆՆԵԼՈՒ ՄԻՋՈՅ

Քիչ մը քարուր (քեավիրի) լաթի կամ թղթի կտորի մը
մէջ դնելով թրցելէ յետոյ պէտք է դնել այն տեղ ուրիշ
կուզուի մրջիւնները հեռացնել. այս միջոցն խիստ պարզ է
եւ փոխանակ սպաննելու անմիջապէս կը հեռացնէ զանոնք :

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՃՆՃՂՈՒԿՆԵՐՈՒ ՎՆԱՍԻՒՆ ԴԷՄ ԱՐԳԵԼՔ

Ճնճղուկներն՝ ինչպէս յայտնի է, թշնամի են սպազոց մա-
նաւանդ կեռասին՝ երբ դեռ չեն քաղուած, սոտղատու ծա-
ռերը անոնց ասպատակաթիւններէ ազատ պահելու համար՝
պէտք է ծառոց արտաքին ճիւղերն կարմրագոյն բրդի թե-
լով իրարու կցել. շատ փորձերով ստուգուած է թէ թռչունք
կը վախան կարմիր գոյնէ :

Ուրիշ ասլահով միջոց մ'ալ կայ, այն է կատուի մը ճիշտ
օրինակն ծառոց վրայ մի քանի տեղ ճիւղերուն կապել, ա-
սոնք քանի որ հովէն շարժին կը վանեն ամեն տեսակ թռչ-
չուններն որք կը յանդգնին ասպատակել ծառերն :

ՀԱՒՆՈՅՆԵՐԸ ՄԱՐԲԻԵԼՈՒ ԿԵՐՊ

Առաւօտուն հաւերը հաւնոցէն դուրս արձակելէ յետոյ,
պէտք է հողէ ամանի մէջ եւ վառած կրակի վրայ ծծմբի ծա-
ղիկ (fleur de soufre) այրել բաւական քանակութեամբ՝ թանձր
ծուխ մը գոյացընելու չափ, որ կարենայ հաւնոցին ամեն ծա-
կերուն մէջ թափանցել:

Վերջը պէտք է դոցել գուռը եւ լուսանցքները եւ բա-

նալ զանոնք միայն կէս օրին, որպէս զի գէշ հոտը դուրս ել-նէ եւ թարմ օդ ներս մտնէ :

Այս կերպով ծծմբային գոլորչիները ամեն տեղ գտնուած հաւու ոջիլները կը սատկեցընեն տուանց վնասելու կենդա-նեաց : Աւելորդ է ազգարարել թէ պէտք է զգուշութեամբ գործել հրդեհ չպատճառելու համար :



ՊԻՏԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Սոյն վերնագրին տակ՝ տնտեսական, առեւտրական, դպրոցական, տնական, օրինական եւալլ պիտանի խնդրոց վերաբերեալ հարցումներ հանդէսիս մէջ հատարակել որոշած ըլլալով, յօժառութեամբ պիտի ընդու-նիմք մեր բաժանորդաց կողմանէ մեզ ուղղուած այս տեսակ հարցումներն, ինչպէս եւ այդ հարցմանց տրուած պատախաններն : Հարցմունք թէ պա-տախանիք պէտք է համառօտ ըլլան եւ պարզ լնգուաւ գրուած . հատա-րակութեան արժանի չը համարուած գրութիւնք եւ չեն դարձուիր :

43. « Օձը թիւնեայի հոտէն կը հեռանայ » կըսեն, իրան է եւ միթէ ուրիշ այնպիսի գեղ մ'ալ կա՞յ, զոր մարդ գործա-ծելով օձէ ազատ մնալու վատահ ըլլայ :

Օձէն վախցող մը

44. Օձի խածուացքին գէմ ինչ գեղ գործածելու է .
Նոյն

45. Քրտինքիսաշի լաւ գեղն ի՞նչ է :

Մէկը որ կը նեղուի

46. Տղոց կոչիկները միշտ պատրաստ կը գնեմ, բայց եր-բէք գոհ չեմ եղած . քանզի ցարդ չեմ գտած տեղ մը՝ ուր կարելի ըլլայ աժան եւ միանդամայն հաստատուն ոտքի ա-ման գնել . արդեօք ձեր ընթերցողներէն մէկը կարո՞ղ է այս մասին տեղեկութիւն մը հաղորդելով ընորհապարտ ընել

Շատ զաւակաց տեր հայր մը

47. Երկու տարիէ ի վեր հիւանդութիւն մ'է ինկած այս տեղի թթենիներու մէջ, գարնան՝ մեր սիանցիցը այսինքն

շերամորթի համար, երբ ըստ սովորականի ոստերը կը կըտ-
րենք, ծառերը կակսին չըրնալ, ոմանք անմիջապէս եւ որ
մէկն ալ՝ թէեւ յետոյ կը ծլին բայց յաջորդ գարնան կը չոր-
նան. այս հիւանդութիւնը տարափոխիկ է, քանզի քովի
քով գտնուող ծառերն հետղնետէ կը պլչկին եւ կը չորնան,
արդեօք թթենիներու այս հիւանդութեան գարսման մը կըր-
նայ ըլլալ:

ԿԱՐԱՊԵՏ ՏՈՆԻԿԵԱՆ

Ի ԿԵՐԱ

ՊԱՐՈՊՈՅ ԺԱՄԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Դունակին առջեւ նստելով՝ խեղճուկ
Արտասուէր մատաղ կնիկ մի գեղջուկ.
Նոյն պահուն ահա գիւղին մեծ տէրտէր
Փորը տնկելով վողոցէն կանցնէր.
— Աղջիկ գու, հարցուց, շարժելով ի գութ,
ինչն այդպէս լաս եւ վայ տաս հոգուդ:
Սրտէն արձակեց խեղճը հառաչ մեծ.
— Էրիկ մարդս, ըստ, ինձի տուաւ ծեծ:
Մարդը որ ներսն էր եւ ականջ կը տար.
— Տէր պապա, գոչեց, սուտ է, մի հաւտար.
Իրաւ տիեցի մէկ երկու ապտակ
Բայց թաշնինակովս իմ, իրեւ կատակ:
Տէրտէրն ալ. — Աղջիկ, ամօթ չէ որ լաս,
Թաշկինակով ծեծն է խաղ անվաս:
— Բայց գու չես գիտեր, տէրտէր միամիտ,
Կինն ըստ, թէ իմ էրիկըս կոպիտ
Խնջելու համար՝ թաշկինակի տեղ
կը գործածէ միշտ իւր մատներ ուժեղ:
Մ. ԱԶԷՄԵԱՆ

«Օր մը իմ ձեռքերս քուկինիդ պէս աղտոտ տեսած ու-
նի՞ս», ըստ մայր մը յանդիմանօրէն իր պլզտի տղուն: «Ոչ
մայր իմ», պատասխանեց սլզտիկը, «բայց մամիկս տեսեր
է եղեր»:

Օր մը գիտողութիւն ըրին անհոգ լրագրապետի մը թէ « Անուշադրութեամբ մի եւ նոյն ըստը՝ երկու օրուան լրագրի մէջ ալ երեցած էր » : « Կը սխալիք » ըստ լրագրապետը անտարբերութեամբ, « մեր բաժանորդներն այնչափ հաւածէին այն կտորին որ ստիպուեցանք կրկնել » :

ԵՐԿՈՒ ԱՐՀԵՍՏԱԿԻՅՔ

Ա. « Յօդուածս կարդացիք այսօրուան թերթին մէջ » :

Բ. « Այս, երկու անգամ կարթացի » :

Ա. « Իրա՞ւ . . . մեծ պատիւ ըրած էք . . . » :

Բ. « Ոչ երբէք . . . շիտակը ըսելով միտքը չի հասկցայ » :

Մարդուն մէկը բանաը պտտած ատեն հարցուց բանտարկեալի մը թէ, « Ինչ բան զինքը հոն բերաւ » : « Կամքը », պատասխանեց բանտարկեալը: « Ի՞նչպէս կամքը քեզ հոս կը բերէ » : « Ես կամեցայ մէկուն ժամացոյցը առնել, նա չի կամեցաւ որ առնեմ, իսկ գատաւորը կամեցաւ որ Յ տարի հոս անցնեմ » :

Քսակն ու ստամոքսը սլարապ մէկը իմանալով որ իւր հարուստ դրացինը՝ աղջկանը ամուսնութեան առթիւ փառաւոր հացկերոյթ մը կուտայ, կը վազէ հարսնետունը եւ տանուտէրը անկիւն մը կանչելով, « Էֆէնտի, կըսէ, աղւոր առաջարկութիւն մը կը բերեմ ձեզի. հազար ոսկւոյ անմիջական շահ մը կրնաք ունենալ. միայն թէ քիչ մը բացատրութեան կարօտ է » : Հայրը վերջին աստիճան ուրախանալով, « Շատ լաւ, կը պատասխանէ. բայց սեղանի ժամանակ է, հրաւիրեալք կը սպասեն, եթէ կը հաճիք միասին ընթրենք, յետոյ կը բացատրէք ձեր առաջարկութիւնը » : Օտարականին ուղածն ալ այն էր. լաւ ճաշ մ'ընել:

Սեղանէն վերջը հարսին հայրը օտարականին հետ առանձին սենեակ մը քաշուելով՝ կը հրաւիրէ զնա որ խնդիրը բացատրէ: « Խնդիրը, կըսէ նա, չատ պարզ է. դուք այսօր ձեր աղջիկը կամուսնացընէք որուն երկու հազար ոսկի դրամօժիտ կուտաք. արդ ես պատրաստ եմ առնուլ զինքը հազար ոսկիով, հետեւաբար դուք ալ հազար ոսկի կը շահիք » :

Հայրը բաւական խնդաց այս լսելացի կատակին վրաց ,
բայց յարմար չդատեց օգուտ քաղել սոյն շահաւոր առա-
ջարկութենէն :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Միութեան հողերու կանոնագրի քննութիւնը ինամակա-
լաց ժողովոյ կողմանէ աւարտած ըլլալով , 23 Սեպտեմ-
բեր չորեքշաբթի օրն Խառն ժողով պիտի գումարի ինամա-
կալաց եւ Տնօրէն ժողովոյ անդամներէն , ուր սոյն կանոնագրի
վերջին ընթերցումն պիտի կատարուի եւ ապա տպագրու-
թեան արուելով բնդէ . ժողովոյ անդամոց պիտի հաղորդուի :

ՍԽԱԼԻ ՄԸ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Արեւելի պատ . խմբագրութիւնը 1103 թւոյն մէջ Տըն-
տեսի ծանուցման առթիւ դիտողութիւն ըրած է թէ ցորե-
նի հիւանդութեան վերնագրով յօդուածը Մասիս լրագրէն
առած ըլլամք : Ներկայիւս հարկ կը համարիմք ուզգել այդ
սխալը թէ յիշեալ յօդուածը Փառնակ էֆ . Ռախայել-
եանի կողմանէ մեզ հաղորդուած էր մի քանի շաբաթ առաջ
զրոյ հրատարակած ենք խմբագրական ինչ ինչ փոփոխութեամբ ,
եւ թէ ստորագրեալ բնագիրը մեր քով կը գտնուի :

ԱՌ ՊԱՏ. ԲԱԺԱՆՈՐԴՄ ՏՆՏԵՍԻ

Ներկայ թիւս կը լրացնէ Տնտեսի տառեշրջանը .
Նիւթոց ցանկը զատ տպուած պիտի զրկուի բաժանորդաց :

Այս առթիւ կ'իմացնեմք թէ յաջորդ շրջանի մէջ պիտի
ջանանք Տնտեսն աւելի ճոխ ընել : Ուստի կը հրաւիրեմք մեր
Արգոյ բաժանորդներն որ փաւթեան ժամ առաջ ստորագրուիլ
որպէս զի կարող ըլլամք տպագրութեան մասին պէտք եղած
կարգագրութիւններն ընել այժմէն եւ

կը խնդրեմք նաեւ իրենցմէ որ բարեհամին օգնել Տնտե-
սի տարածման որուն յարատեւութեան եւ ընդարձակու-
թեան համար ամեն զոհողութիւն յանձն առած եմք :

Նիւթոց ցանկին հետ պիտի հրատարակենք աւելի ըն-
դարձակ տեղեկութիւններ :

ՀԱԽԱՔԱԾՈՅ ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐՈՒ

Ա.Ան մարդ իր բախտի գործաւորն է :

Ժամանակը արծաթէ է, կարգադրութիւն կէ ս կեանք :

Առաջ . բան մը հոգ մի ըներ, ամեն բան դու քեզմէ յուս, գժբաղդութեան աեզի մի տար այլ ընդհակառակն աւելի արիութեամբ դիմագրաւէ :

Մէկը գոհ չէ իր բախտէն, ոչ ալ գժգոհ իր հոգիէն :

Մարդու բախտ իր կացութեան ու կեանքի պայմաններն են :

Յանդգնութիւն « եղիցի լոյս » է :

Գիտութիւն մեր կեանքի թիկնոցն է :

Մարդիկ ուժով կը տիրեն, կիները գեղեցկութեամբ :

Խելք ու գործօնութիւն եղիւսեան դաշտեր թռելու թե-
ւեր են :

Փարաները պահէ, ոսկիները ինքնին կը պահուին :

Կեանքը խառնուկ մանած է, պէտք է անոր ծայրը գտնել :

Պէտք է աշխատիլ ու իրթուիլ. տգէտը կը մեռնի մեռնելն
առաջ, իր մարմին՝ իր հոգւոյ շարժուն գերեզմանն է :

Պէտք չէ յուսահատիլ եւ ոչ մի պաշտօնի մէջ, գլխաւոր
կէտը սանդուխի առաջին ոտքը կոխելն է :

Ա.Ան մարդ իր մթնոլորտի ազգեցութեան խառնածինն է,
իր կեանքի ազգումներու ամրողութիւնը :

Շատերու մտքերուն ու լուսանքներուն պէտք է ստոյիկ-
եան դիրք մը հակադրել :

Մաղկուզի մը փառքի չտանիր :

Հաճոյքները խնայելն զանոնք կրկնապատկել է :

Ա.Ան տեղ հաճոյանալը իմաստունի գաղտնիքն է :

Ով որ բան մը չվտանգեր, բան մը չչահիր :

Ցաւի, մահու, ոչնչի չենք հաւատար, որովհետեւ եսու-
թիւնը շողոքորթօրէն կը ժխտէ կեանքի այս մութ կողմերն,

եւ սակայն ինչ որ տեսօրէն կը ժխտենք, գործնաբար կ'ըն-
դունինք օր մը :

Ժամանակ կեանքի ոստայնն է :

Դեր խոհանոց՝ վտիտ կատակ :

Համադամք մուրացկանութիւն կը հոտին :
Անկարեւոր գնողն կարեւորը կը ծախէ .— սնդուս , ծի-
րանի եւ թաւիչ՝ կը մարեն խոհատան բոցը :
Ցոյքը առատ կը նախաձաշէ , աղքատ կը ճաշէ , ամօթով
կընթրէ :

Ծոյլը սատանի բարձն է :

Լաւ է ճնշել առջի փափաքը քան գոհացնել անոր հետե-
ւանքները :

Հացն իր անկուշումներն ունի :

Մարգոց գործելու շարժառիթը ազդեցութեան մը մաս-
նաւոր ծանրութիւնն է :

Կեանքը ընկոյզ է , ճուն ու փեճեկն մաքրելէն վերջ կթոնը
կը քաղենք :

Սէրն շատ բան կընէ , բայց արծաթն ամեն բան կ'ընէ :

Անընդհատ արտադրութիւն մը միայն կրնայ մնայուն ընել
ամեն մի կարգի հարստութիւնը :

Անհատութեան մը բոլոր արժեքը իւր եսն է :

Մարդու նախապէտքը ապրիլն է , — հոգւոյ ու մորմոյ
առողջութիւն ,

Ամեն շարիքի ենթակայութեան հաւատա՛ , ու դիմակալել
սորպիր :

Բերա , Օդոստ . 22 1887 .

ԶԵՐԱՑ ԿՈՇԻՇՆԵՐՈՒ ԴԱՐՄԱՆ

Ե պատասխանի թիւ 51 հարցիւմն

Մեր ծանօթներէն մէկը ըստու՝ թէ տիկին մը կայ որ տը-
ղայոց ձեռքի կոծիծները աշօթելով խսկոյն կը թափին եղեր։
տիկինը սոսկ մարդասիրաբար ընելուն իր հաւատքին վրայ
պէտք չէ երկեայիլ։ Բայց որովհետեւ մեր գիտուն բժիշկները
քիչ մը թերահաւատ կը լլան՝ ուստի պէտք է յաւելցնեմ մի-
անգամայն թէ յիշեալ տիկինը թգենիի պզտի թարմ ճիւղի-

կով մը կաղօթէ եւ թէ այդ ճիւղիկը կոծիծներու ամեն մէ-
կին վրայ մասնաւորապէս կը քսէ եղեր . արդեօք թղենիին
հիւթը կամ կաթը մասնաւոր բուժիչ յատկութիւն մը ունի .
այս կէտս մեր բժշկաց մասնաւոր ուշադրութեանը կը յանձ-
նարարեմք :

ԶՐՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Ի պատասխանի թիւ 55 հարցման

Աղրիւրէ բղիսած եւ վազուկ ջրերը հանքային այլեւայլ
աղեր եւ լուծեալ օդ կը սղարունակեն որ մեր կաղմուածքին
վերայ կը ներգործեն , ուստի խսելու համար այս ջրերը ա-
ւելի օդակար են եւ միանդամայն ախորժելի թեթեւ եւ
զով կ'ըլլան :

Իսկ անձրեւային ջրերը գրեթէ քնաւ կամ շատ քիչ աղեր
եւ օդ սղարունակելով , անհամ եւ ծանր կըլլան , եւ եթէ
երկար ժամանակ հանդարտ վիճակի մէջ մնան՝ առկախ գըտ-
նուած բուսական մասերը կը փատին , եւ ջուրը կը հոտի եւ
կ'որդնոտի :

Սակայն անձրեւային ջրերը լաւ են երես եւ ձեռք լուա-
լու համար վասն զի աղերէ գերծ ըլլալով մորթը չեն կոտե-
ցըներ . նմանապէս կընան լուացքի եւ կերակուրի գործած-
ուիւ , վասնզի բանջարեղէնները դիւրաւ կը խաշեն եւ աճա-
ռը լաւ կը փրփրացընեն :



ԵՓԱԾ ՄՍԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Ի պատասխանի թիւ 56 հարցման

Եթէ միսը շատ եփի՝ սննդական հիւթոց մէկ մասը ա-
նօդուտս կըսպառի եւ պինդ ու անհամ կըլլայ . Ամենէն սը-
նընդարար միսն՝ բաց օդոյ մէջ , կրակի վրայ խոռոված եւ

չափաւոր եփածն է։ Ծեր կամ մանուկ անասնոց միսն դըժ-
ուարամարս է եւ սննդարար չէ։ Երիտասարդ անասնոց միսն
ամենէն ընտիրն է։

ԱԿԱՆՁԻ ԽԼՈՒԹԵԱՆ ԴԵՂ

Ի պատասխանի թիւ 57 հարցման

Եւրոպական թերթը մը կը հաւասաբէ թէ Զինաստանի
մէջ կրօնաւոր մը ականջի ցաւէ եւ լութենէ բժշկուեր է
հետեւեալ կերպով։ Զինաստանի յատուկ ֆինքակօա կոչուած
բուսոյն հիւթէն քանի մը կաթիլ ականջին մէջ վազցընելով՝
շատ մը նիւթեր ականջէն պարպուեր են եւ այս գործողու-
թենէ յետոյ լութիւնը բոլորովին անհետացեր է։

Նոյն թերթը կը յաւելու թէ այդ բոյսը Զինաստանէն
թերել տարու հարկ չկայ վասն զի Եւրոպիոյ մէջ ալ կաձի եւ
որուն ռամկօրէն անունն է «Հրէի մօրուք», իսկ ուսումնա-
կան անունն է (Saxifraga Sarmentosa) սախիքրակա սարմեն-
քօցա։

Անտարակոյս եմք որ Պոլսոյ դեղագործք կամ Եւրոպացի
պարտիզանք կրնան ճանչնալ այս տունկը։ Բաւական է
սորա թարմ եղած ժամանակ տերեւները ճգմել եւ ելած
հիւթը ականջին մէջ հեղուէ։

ԵՓԱԾ ՀԱԻԿԹԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Ի պատասխանի թիւ 58 հարցման

Հաւկիթը ինքնին ամրող կերակուր մ'է, սակայն աւելի
դեղնուցին պատճառաւ որ սննդական առաս նիւթեր կը
պարունակէ։ Թոյլ եփածը աւելի դիւրամարս է եւ զգու-
շանալու է պինդ եփուածէն։ Աւելորդ է ըսել թէ հաւկի-
թին միշտ թարմը ընտրելու է։

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Վիճակագրութիւնք ցոյց կուտան թէ 1885 ին Սնդդիոյ մէջ, 2243 տնաշինական ընկերութիւններ կան եղեր, որոց ընդհանուր հասոյթն եղած է նոյն տարին՝ 21,671,944 Անդդիական ոսկի, որ կ'ընէ իրրեւ 2,600,000,000 Օսմանեան դահլիկան :

Մինչդեռ ամբողջ Տաճկաստանի մէջ հազիւ կրցանք միայն մէկ հատ ունենալ որ է Արեւելեան Տնտեսական Միութիւնը :

Հետեւեալ տեղեկագրէն կ'երեւայ թէ ծաղկի հիւանդութիւնը նոյնասեռ ուրիշ հիւանդութեանց հետ բաղդատուելով, որչափ տկարացեր է Անդդիոյ մէջ :

6144 հարսանիթ (քըզամուք), 2986 կապուտ հազ, 1554 կարմրուկ (քըզըլ) եւ 1066՝ այլ նմանօրինակ հիւանդութիւններէ մահ տեղի ունեցած են, մինչդեռ 47 հոգի միայն մեռ են ծաղիկէն բոլոր Անդդիոյ մէջ, ուր՝ պէտք է գիտնալ թէ 128,456 եղած է ընդհանուր մեռեալներու թիւը նոյն ռամսէին մէջ :

Յունիսի սկիզբէն մինչեւ 0գոստոսի սկիզբները՝ այսինքն 10 չարթուան միջոցին, 550 ժամ պայծառ արեգակ ծագեր է Լօնարա քաղաքին մէջ, որ ըսել է օրը իրրեւ $7\frac{5}{4}$ ժամ. ասիկա յիշատակութեանց մէջ ամեն ամառներէ պայծառագոյնը կը սեպուի: 1876 ի ամառը շատ գեղեցիկ էր, բայց միայն 478՝ այսինքն օրը իրրեւ $6\frac{5}{4}$ ժամ արեւ ունեցաւ: 1778ին որ նոյնպէս գեղեցիկ էր 413՝ այսինքն օրը 6 ժամ արեւ ծագեցաւ: Խակ 1879 ին որ գիտցուած ամառներու ամենէն անախործն էր, նոյն 10 չարթուան մէջ արձանագրուած արեւու ճառագայթներն եղան 278 այսինքն օրը 4 ժամ միայն:

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Կ. Գ. Պույարհար. Յարդ տեղեկութիւն չէ եկած մեզ ձեր բաժանորդ գրուելու մասին, ներկայ թիւս կը զրկենք միայն ի տեղեկութիւն, սպասելով որ անդ գործը կարգադրեք:

Յ. Գ. Փ. Զմիւռնիա. Օգոստոսէն սկսեալ վեցերրորդ օրինակ մ'ալ սկսաւ զրկուիլ:

Մ. Գ. Ա. Զարշամպա. Ձեր գրաբերէն ստացանք մէկ տարեկան բաժնեգին. թիւ 95ն սկսաւ զրկուիլ ցոյց տրուած հասցէին:

Մ. Հ. Օրտու. Օգոստոսէն սկսեալ Տնտեսէն մէկ օրինակ եւս զրկուեցաւ, ինչպէս եւ Միութեան կանոնագիրը:

Ո. Գ. Օ. Ալախիա. Ստացանք 15 դահեկանի նամակադրոշ. Տնտեսներն զրկուեցան ցոյց տրուած անձանց, չնորհակալ ենք ձեր բարեկամութեանցն համար:

Ա. Ա. Հ. Զամ-Պաշը. Օգոստոս 5 նամակնիդ ստացանք, Տնտեսներն սկսան զրկուիլ նոր գործակալին, շատ չնորհակալութիւն ճեզ եւ անոր համար. Միութեան կանոնագրութիւնն ալ զրկուեցաւ:

Ա. Ա. Մ. Եօլիա. Երբ Տնտեսի բաժանորդագրութիւնք բարեկամաց աջակցութեամբ պէտք եղածին չափ տարածուին, այն ատեն մտադիր ենք թէ Հայ տառերով եւ թէ Տաճկերէն տառերով Տնտեսի Տաճկերէնն ալ հրատարակել:

Կ. Ա. Փ. Մարտիլան. Ձեր նամակաւն 15 դահեկան ստացանք, Տնտեսներն ալ զրկուեցան. չնորհակալութիւն ձեր ազնիւ զգացմանցը համար:

Յ. Հ. Կարին. Ստացանք 178 դահեկան ոսկի դրամ, մեծապէս չնորհակալ ենք ձեր օգտակար աջակցութեանցն համար:

Ց ՈՒՑԱԿ

Արեւելեան Տնտեսական Միութեան բաժանորդաց կողմանէ 1887 օգոստոս 11է մինչեւ սեպտ. 12 (Միութեան կազմակերպութեան Բ. տարւոյ 25^{րդ} շաբաթէն մինչեւ 27^{րդ} շաբթուան վերջը) տեղի ունեցած հինգ շաբաթական վճարմանց, որոց ընդհանուր գումարն՝ ինչպէս կը տեսնուի, եղած է 13170 զրչ:

Տ Ե Տ Ե Ս

ՀԱՆՐԱՊԵԱ ԱՄՄԵԱԾ

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ ԵՒ ՆՈՐ ՄՐՅԱՆԱԿԲ

ՏՆՏԵՍԻ

Տնտեսի առաջին տարեկան շրջանը լրացած ըլլալով՝ պարտաւորութիւն կ'զգանք մեր անկեղծ չնորհակալութիւնքն յայտնել այն ամեն անձանց՝ որք սոյն օգտակար գործոյն յաջողութեանը համար մեզ աջակից եղած են:

Մեք՝ Տնտեսի առաջին տարուան հրատարակումէն բաւական վնաս մը կրել յետոյ, չխպիտի համարձակէինք երկրորդ տարուան հրատարակման ձեռնարկել, եթէ ուրախութեամբ տեսած ըբլայինք թէ՝ մեր հրատարակութեանց հետ մեր բարեկամաց թիւն ալ օր օրի ընդարձակուելով եւ բաժանորդագրութիւնք՝ մասնաւանդ վերջին ամիսներու մէջ գրեթէ կրկնապատկելով, կերպիւ իւիք մեզ առհաւատչեայ մ'եղած են դալ տարուան համար առաւել յաջողութեան:

Ներկայ հրատարակեալ նիւթոց ցանկէն կը տեսնուի՝ թէ Տնտեսի առաջին հատորը՝ իբրեւ 500 էջ, աւելի քան 200 զանազան նիւթեր կը պարունակէ, որոց մէջ կը գտնուին խել մը տնտեսական, առողջապահական, արհեստական, երկրագործական, ուսումնական, բանաստեղծական եւ այլ առոտնին օգ-

տակար խորհուրդներ եւ դարմաններ. նոյնպէս պիտանի հարցմունիք եւ պատասխանիք որք բարի գրգիռ մը յարուցանելով՝ շատերու օգտակար եւ մասնաւոր գոհանակութեանց պատճառ եղած են: Յառաջիկայ շրջանի մէջ պիտի ջանամք թէ այս եւ թէ միւս ճիւղերն աւելի խնամով մշակել եւ նիւթերն ընդհանրապէս՝ ըստ կարելւոյն աւելցնել: Տնտեսի թուղթին չափը եւ ձեւը թէ եւ նոյնը պիտի մնայ բայց պարունակութիւնը պիտի ընդարձակուի զգալապէս. քանզի՝ փոխանակ 10 ով 16 սանթիմեդրո ինչպէս էր մինչեւ ցարդ, տնտեսն 12 $\frac{1}{2}$ ով 20 սանթիմէդրո տարածութեամբ տալագրութիւն պիտի պարունակէ. այնպէս որ յաջորդ Տընտեսի 16 էջը նախորդ Տնտեսի 25 էջերուն պիտի համապատասխանէ:

ՄՐՅԱՆԱԿ ՏՆՏԵՍԻ

Յայտնի է թէ անցեալ տարի տան ծախտագագրութեան համար մըրցանակ մը սահմանած էինք: Մեծ. Ա. Մ. Ալթունեան էֆէնտի շահեցաւ այն մրցանակը որ էր —
Ուրօնեայ լեռացնով ընտիր ժամացոյց մը

եւ որ յուլիս 10 ին յանձնուեցաւ Ալթունեան էֆէնտի, իւր իսկ ներկայութեանը ծախտու առնուելով՝ Պալաթիոյ Մինասեանց վաճառատունէն:

ԱՅՍ ՏԱՐԻ ԵԲԿՈՒ ՄՐՅԱՆԱԿ ՍԱՀՄԱՆԱԾԵՆՔ

Ա. ՄՐՅԱՆԱԿ

ԳԵՂԵՑԻԿ ԱՐԾԱԹԵԱՅ ԱՊԱՐԱՆՁԱՆ ՄԸ

Մէկ ՕԱՄԱՆԵԱՆ ուկի արժողութեամբ

որ պիտի տրուի մեզ բաժանորդ կամ
մեր բաժանորդաց զաւակ կամ քոյրն
եղող այն օրիորդին որ կարենայ ներ-
կայացնել՝ մեր միջնակարգ ընտանեաց
առատնին գործերու ամենէն կատար-
եալ ցանկն. այսինքն թէ ընդարձակ
հսնափ ընտանիքի մը մէջ առատնին ինչ
գործեր կան անօրինուելիք. զօր օրի-
նակ, կերակուր եփել, լաթլուալ, կա-
րել, կարկածել, տղաքը հագուեցնել,
գպրոց զրկել եւն եւն. պէտք է մինակ
գործոց անունը նշանակել եւ ոչ թէ
գործելու եղանակը ցոյց տալ:

Այս մրցանակիս մասնակցիլ ուզող-
ներն պէտք է իրենց գրութիւնքը մեզ
հասցնեն մինչեւ դեկտեմբեր օ շաբաթ
օր, որպէս զի յանձնաժողովոյ կողմանէ
քննուելով. արդիւնքը դեկտեմբերի
Տնտեսի մէջ հրատարակուելէ յետոյ
կարելի ըլլայ կաղանդէն առաջ մրցա-
նակը տիրոջն հասցնել:

Պէտքէ հոս մասնաւորապէս նշանա-
կեմք այս մրցանակիս նպատակը, որ է
տեսնել՝ թէ արդեօք մեր աղջիկները
յիրաւի՝ ինչպէս որ շատերէ կը բամբաս-
ուին, միայն ուսման կարգարով եւ հագ-
ուել սպուելով ժամանակ կանցնեն թէ
չէ հետամուտ են նաեւ՝ ինչ որ ամեն
պարկեցու աղջկանց կը պատկանի, վե-
րահասու ըլլալ առանին գործառնու-
թեանց. վասնորդյ որչափ որ մրցանակը
վասարկողը միայն մէկ անձ պիտի ըլլայ,
սակայն մեք պիտի հրատարակենք հա-
ճութեամբ մրցան մասնակցող բոլոր օ-
րիորդաց անուններն, հոգ չէ թէ անոնց
ամենուն գործքն ալ կատարեալ ըլլայ,
քանզի մեր վիճակութիւնը կամքն ու ջանքն
է որք առաջնորդ են կատարելութեան:

Բ. ՄՐՅԱՆԱԿ

ԸՆՏԻՐ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՑ ՄԸ

Երեք ՕԱՄԱՆԵԱՆ շիրա արժողութեամբ

Այս երկրորդին մրցան համար պիտի
ընդունին հաւասարապէս, տիկնայք թէ
օրիորդք որք բաժանորդ են Տնտեսի,
կամ քոյր, մայր եւ դուստր բաժա-
նորդաց:

Մրցումը պիտի ըլլայ նախկին մրցա-
նակը վաստիող առատնին գործոց ցան-
կին վրայ. այսինքն թէ՝ ցանկին մէջ
նշանակուած առատնին գործերը լոնչպէս
պէտք է գործադրել դրամի եւ ժա-
մանակի անտեսութեամբ եւ թէ այն
ցանկին գուրս այլ գործեր եւս կրնան
գտնուիլ:

Այս երկրորդ մրցան համար նա-
մակներու ընդունելութեան պայմա-
նագամը յետոյ Տնտեսի միջոցաւ պիտի
ծանուցուի:

Արդ, թէրթի ընդարձակման, նիւ-
թերու ճոխացման եւ արժէքաւոր մրցա-
նակաց յաւելման հակառակ՝

Տնտեսի բաժանորդագրութեան

Գինը պիտի մնայ

Վեցամսնեայ Հինգ զրուշ միայն

Կը յուսամք թէ մեր բարեկամք պիտի
բարեհածին շարունակել իրենց աջակ-
ցութիւնը, յանձնարելով Տնտեսն
իբրև ժողովրդային օգտակար թէրթ
մը՝ իրենց ծանօթներուն. որով մենք
եւս քաջալերեալ, պիտի կարողանամք
մեր հրատարակութիւններն առաւել
ճոխացնել բազմազան նիւթերով. Սոյն-
պիսի բարեկամաց համար մեր մասնա-
ւոր շնորհակալութիւնը պիտի յայտնեմք
միշտ Տնտեսի միջոցաւ:

Բաժանորդագրութեանց համար
պէտք է դիմել, Դալաթիա, Քիւրէկծի-
էր Զիվէրպէսէյ խան թիւ 14:

Բաժմանորդագրութիւնք կրնան նաեւ
գրավաճառաց ձեռօք տեղի ունենալ
ինչպէս ի գաւառս մեր պատուա-
կալ գործակալներու միջոցաւ :

Ա. Զ. Դ

Տնտեսի ինչ ինչ թիւերն սպառած
ըլլալով բաժմանորդագրութիւնք առա-
ջին հատորոյ համար այլ եւս չեն կըր-
նար ընդունուիլ, միայն՝ եթէ նոյն հա-
տորն ունենալ կամեցողներու թիւն
շատնայ, մտագիր ենք այն ատեն կրկին
տպագրել տալ. վասնորոյ կը խնդրուի
որ այնպիսիներն իրենց կարքն մեզ ի-
մացնեն :

Բաժմանորդագրութիւնք

յառաջիկայ երկրորդ հատորոյ հա-
մար, պէտք է ժամ առաջ մեզ զեկու-
ցուին, որպէսզի կարող ըլլամք մեր
հրատարակելիք թիւերն հետզհետէ
կանոնաւորապէս ուղղելով մեր ար-
գոյ բաժմանորդներն գոհացնել.

Տնօրինութիւն

«ՏՆՏԵՍ» ամսագրի

Կ. Պողիս. Դաշտիա
Քիւրեկահիւր. Զիյլիր-պէյ խան թիւ 14.

ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Դ. Կ. Ս. Կէսարիա. — Օգոս. 11 նա-
մակաւ յստնած էիք թէ փոխարէնք
52 դր. պիտի ընդունիմք Յ. Զ. Էֆ. է,
դեռ չի կրցանք ստանալ. Ա. հատորոյ
թիւ 21-ն 4 օրինակ այս անզամ դըր-
կուեցաւ :

Յ. Ա. Աւաբագար. Օգոս. 26 նամա-
կաւ կիմացնէք թէ 10 դր. դրկած էք
ստակայն չստացանք :

Մ. Գ. Ա. Զարշամպա, ստացանք

Սեպ. 21 նամակաւ 77 դր.ի թղթա-
դրոշմ 6 նոր բաժմանորդաց հաշւոյն ,
որոց թերթերն պիտի դրկուին Բ. հա-
տորէն սկսեալ. Ա. հատորոյ թերթերու
ստացման եղանակն ներկայ ցանկիս
յառաջարտնին մէջ բացատրուած է .
Արեւել. Տնտես. Միաւթեան Կանոնա-
դրութենէն 5 հատ պիտի դրկուի ձեզ :

Յ. Բ. Սեբաստիա. Սեպտ. 12 բառթ
բոստալով Տէմիրճիպաշեան էֆ.ի մի-
շոցաւ բանիցս Տնտեսի բաժմանորդա-
գրելու փափաք ունենալիդ յայտնած
էք եղեր, սակայն որ և է տեղեկութիւն
չէ տրուած մեզ, ըստ ձեր խնդրանաց
այս անզամ 4 օրինակ Տնտես պիտի
դրկուի որոշեալ անձանց սկսեալ Բ.
հատորոյ Ա. թուէն, զաւառաց համար
Տնտեսի տարեկան բաժմանորդագինն
է 13 դր :

Կ. Ա. Խ. Տրապիզոն. Սեպ. 12 նա-
մակաւ ստացանք 39 դր.ի թղթադրոշմ,
ձեր հաշւոյն մի տարեկան նուէր պի-
տի դրկուի Ս. Ե. էֆէնտիի և ըստ
ձեր Հոկ. 17 նամակին 5 օրինակ ձեզ
և մի օրինակ Մ. Մ. էֆ.ի սկսեալ Բ.
հատորէ, որով ընդ ամենը 7 օրինակ
ձեր հաշւոյն անցած է :

Տ. Տ. Զ. Ն. Կէմլեյիկ. Սեպ. 12 նա-
մակաւ ձեր ցոյց տուած անձանց Տըն-
տեսներն պիտի դրկուին Բ. հատորէն
սկսեալ :

Գ. Գ. Շ. Գարահիսար. Սեպ. 12 եւ
23 նամակներսվ ստացանք ձեր գրա-
բերէն 52 դր. չորս անձանց բաժմա-
նորդագինն. Ա. հատորոյ թերթերու
ստացման եղանակն ներկայ ցանկիս
յառաջարբանին մէջ բացատրուած է :

Մ. Ա. Բ. Իւնեայ. Սեպտ. 16 նա-
մակաւ 19 ½ դր.ի թղթադրոշմ ստա-
ցանք Տնտեսներն պիտի դրկուին ցոյց
տրուած հասցէներու ինչպէս եւ ձեզ

**Արեւելեան Տնտես. Միութեան կանո-
նագրութեանէն :**

Մ. Պ. Զ. Սեբաստիա . զրկուեցան
ձեզ Տնտեսի 9 և 10 թիւերն :

Կ. Ա. Փ. Մարտիւան . Տնտեսի Ա.
հասորոյ թերթելու ստացման եղա-
նակն ներկայ ցանկիս յառաջաբանին
մէջ բազմատրուած է :

Գ. Պոլբարեար. Հոկ. 13 նամակաւ
ստացանք 13 դրշ.ի փոխանակազիրն
Յ. Ա. էֆ.ի վրայ, սակայն դեռ զան-
ձուած չէ :

Մ. Հ. Orsni. Հոկ. 13 նամակաւ
կը յայտնէք թէ պիտի ստանաք 39
զր. Յ. Զ. էֆ.է դեռ զանձուած չէ,
թերթեղն ժամանակին դրկուած են ձեզ:

Ս. Մ. Էշիրէկ. Հոկ. 19 նամակաւ
ստացանք 26 դր. Թթագրում:

Խ. Ս. Ուզուն Քեօլիրիւ. Հոկտեմբեր 22
նամակաւ ստացանք 26 դրշ.ի Թղթա-
դրում, Թերթերն պիտի զրկուին ցոյց
արուած անձանց սկսեալ Բ. հասորէ:

Ա. Ք. Սամսոն . Տնտեսի համար
ձեր հաշվայն ստացանք երկու Օսմ.
ոսկի Ն. Կ. Պ. էֆ. է:

Գ. Տ. Գ. Երիզա. Մեր սովորութիւնն է Ծնտեսի տարեգլխոյն հաշիւները փակել, ուստի կը խնդրուի որ ձեր հոգչիւն կարգադրէք :

Ն. Թ. Սեբաստիա. Մեր մասնաւոր շնորհակալութիւններն :

Ա. Գ. Օ. Ամասյա. Տնտեսի 12^{րդ}
թուղին մէջ ձեզ պատռասխան գրուած է:

Ս. Ս. Մ. Եօդղաս. Որշեալ անձանց
Տնտեսներն պիտի զրկուին միայն թէ
Ս. հատորոյ համար ձեր հաշիւը պէտք
է որ կարգադրէ :

ս 9 7

Հիւանդութեան պատճառաւ
հոկտեմբեր ամսաթերթի հրատա-
բակութիւնն ուշացած ըլլալով նո-
յեմբերի թերթին հետ ի միասին քիչ
օրէն պիտի հրատարակուի:

Հրատարակուեցաւ

ՀԵԴԱՐՁԱԿ

OPUS 38

1888

unwilling

Գիւ 3 Դահեկան

Կեդրոնատեղին է Գ. Պաղտառիկան գրա-
սուն Յակոբեան խան թիւ 15 :

S U S T E U

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ Ա. ՀԱՏՈՐՈՅ

1886-1887

Ազդ	87, 104, 152, 220
Ազնիւ չուխաները կամ բռնէ սա- ւանները մաքրելու կերպ	276
Աժան թերք մը	80
Ականջի խլուքեան դեղ	285
Ակռայի ցաւու դեղ	60
» » պատճառ	51
Ակռաները դիւրին հանել, տես՝ ման- կանց ակռաները եւն.	
Ակռաները ովզ եւ ներմակ պահե-	

լու միջոց	274	Բարեձեռութիւն հազուսի	18
Աղջկանց վարժարաններ եւ արհես- տանցներ, տես՝ տան մատակա- րարութեան համար աղջ. վարժ եւն.		Բարեկամիք, տես՝ Տնտեսի բարեկամիք	
Աղօրք, տես՝ փոքրիկ Դէորդին աղօրքը		Բարի խորհուրդ	190
Անհոգութիւն, տես՝ ծնողաց անհո- գութիւն		Բարոյական առակներ	95
Անուանե անդամոց, տես՝ Արեւել- եան Տնտես. Միուրեան եւն.		Բնակարանի մասին	57, 109
Առակներ, տես՝ Բարոյական ա- ռակներ		Բրդելէնները լուալու կերպ	169,
Առաջին խօսք	3	տես նաեւ ազնիւ չուխանները եւն.	
Առ բնրեցողս	176, 188	Գեղեցիկ խօսեր, տես՝ հաւաքածոյ գեղ, խօսերու	
Առ մշակն	186	Գիտական բաղրուածք	156
Առ Պատ. անդամս, տես՝ Արեւել- Տնտես. Միուրեան եւն.		Գորգ (խալի) զործելու վրայ	149
Առ Պատ. բաժանորդս Տնտեսի	281	Գործակցութիւն	6
Առոտուան բուն	228	Գրիչ մաքրելու աժան զործիք մը	275
Արաբական առակ	255	Գրերը պահպաննել միջատներու դէմ	169
Արատները (հազուսի եւն.) մաքրել	231,	Գոյա, տես՝ ներմակելինները գոյա ընել	
	252	Դէմիք ըպարում (ներկել)	165
Արեւելեան Տնտես. Միուրիւն 76, 127, 154, 154, 263, 281		Դիմակուն բուղը	276
Արեւելեան Տնտես. Միուրիւն, ան- ուանք անդամոց	61	Ելակի անոյշ	170
Արեւելեան Տնտես. Միուրիւն, ան- ուանք անդամոց, յաւելուած	69,	Եղունգները (մսին մէջ մասձ) դար- մանել	250
Արեւելեան Տնտես. Միուրիւն, ան- ուանք անդամոց	86, 128, 167, 191, 237, 263	Եղունգներու (մատի) վրայ բակած մորք հանել	254
Արեւելեան Տնտես. Միուրիւն, առ Պատ. անդամս	20, 36, 70, 86, 87	Երգ Հայնէ Գերմանացւոյն	255
Արեւելեան Տնտես. Միուրիւն, Բ. սա- րեկան Ընդհ. Ընդուլ	127, 134	Երեսի սեւ բիծեր հանելու կերպ	249
Արեւելեան Տնտես. Միուրիւն, Կա- նոնագրութիւն	153	Երեք մեծ բիծեկներ	140
Արեւելեան Տնտես. Միուրիւն, Ցու- ցակ շաբարական վճարմանց 71, 129		Եփած մսի յատկութիւնը	284
	147, 165, 218, 239, 263, 287	» հաւկը »	285
Արեւազարկի դեղ	159	Եօրք զործիքները	59
» արգելք	250	Զբաղմունի տղայոց	54
Արտերու մուկերը ջնջելու համար	151	Զուարնալի փորձեր	202
Բիծերը մաքրել, տես՝ Երեսի բիծերը		Ընկալազիր մը, տես՝ նմանօրինակ	
» » հազուսի, տես՝ ա- րատները		Ընկալազիր մը	
Բաղդատութիւն մը	260	Ընկերային նամականի	201

Լճակ	54	Հաւաքածոյ գեղեցիկ խօսքերու	282
Լուերը շնչելու միջոց	251	Հաւերու կսորածի դարման	151, 171
Խեղդուածներու, տես՝ շրահեղձ ան- ձանց դարման		Հաւերու կսորած ՚ի Պանտրմա	145
Խլուրդները շնչելու միջոց	150	Հաւկիբ, տես՝ եփած հաւկիբի յա- կուրիւնը	
Խնայողութիւն եւ ծախս	222	Հաւեցներու մաքրութիւն	151, 171, 277
Խոնաւուրեան դէմ	275	Հաւ պահելու վրայ	100
Մաղիկները (կրուած) երկար պահել	262	Հիւանդուրեան դէմ փոխադարձ օգ- նուրիւն, տես՝ փոխադարձ օգ-	
Մանուցում	122	նուրիւն, իմանդուրեան դէմ	
Մրուած ձէրը լաւցնել	272	Հիւպատուարան, տես՝ Օսմանեան	
Միսախոնի զոհ	132	նիւպատուարան	
Միսախոնի ստակով տան մը տէր ըլ- լալու նամբան	75	Հնազոյն համալսարան մը	156
Մխելու վրայ	55, 125	Հոգի	226
Մնողական անհոգութիւն	37	Զեռաց կոծիծներու դարման	285
Կարք երկար տան բարմ պահել	140, 170	Զեռերու, տես՝ նարուած ձեռքե- րու դեղ	
Կաք (հում) խմելու վրայ	254	Ձէր, տես՝ ծրուած ձէրը լաւցնել	
Կալուածատէր, տես՝ կոկիկ կալ- ուածատէր		Ճարուած ձեռքերու դեղ	250
Կալուածատիրութիւն օսարականաց, տես՝ օսարականաց կալ.		Ճզնաւոր մուկն	269
Կանոնագրութիւն Արեւ. Տնտ. Միուր.	155	Ճերմակելէնները զօլա ընելու կերպ	192
Կապուտ հազի դեղ, տես՝ հազ		Ճննդուկներու վնասին դէմ արգել	277
Կարեւոր դիտողութիւնն բացախին վրայ	271	Մազերը զօրացնելու համար	250
Կարի մաքինայի վրայ	50, 78, 115, 161	» չըափելու	250
Կարմիր մելան պատրասելու կերպ	120	Մազերու քեփը մաքրելու համար	205
Կին եւ ոսկին	260	Մանկանց ակուաները դիւրութեամբ	
Կոծիծ, տես՝ ձեռաց կոծիծներու դարման		բուսնելու միջոց	202
Կոկիկ կալուածատէր	116	Մանկանց սեռունդը, տես՝ նորածին	
Կուսերը հանել, տես՝ ոսքի կուսերը		մանկանց սեռունդը	
Կորուած ծաղիկները պահել, տես՝ ծաղիկները		Մանկութիւն	213
Հազուսի արաւները եւ բիծերը մաքրել	251, 252	Մաքրել, տես՝ ազնիւ չուխաներ կամ	
Հազուսի բարեձնւութիւն, տես՝ բա- րեձնւութիւն հազուսի		բրդելէններ մաքրել	
Հազ, չոր հազի եւ կապուտ հազի դեղ	253	Մելան կարմիր, տես՝ կարմիր մե- լան չփնել	
Հակառակորդներն, տես՝ մեր հակա- ռակորդներն		Մեղուաց խայրուածին դեղ	203
Հայնէ Գերմանացւոյն երգ, տես՝ երգ		Մեր հակառակորդներն	205
Հայնէ Գերմ.		Մէտէռաքանական վիճակ Կ. Պոլոյ	241
Հարցումներ, տես՝ պիտանի հար- ցումներ		Միս, տես՝ եփած մսի յատկութիւնը	
		Միսը բարմ պահելու միջոց	202
		Մլուկները եւ լուերը շնչելու միջոց	251,
			249
		Մկներու հալածում	276
		Մկները շնչել արտերէն	151
		Մօակն, տես՝ առ մօակն	
		Մըջիւնները՝ խոհանոցէն եւն. հե-	

Պացնել	170, 277	Տան մատակարարութեան համար,
Մրցանակ Տնտեսի	81, 141, 165, 177	աղջկանց վարժարաններ եւ ար-
Ցորդորակ	99, 154, 185, 269	հետազոցներ
Նամակագրութիւնն , տես՝ Տնտեսի		265
նամակագրութիւնն		Տղաս ինչ ընեմ
Նամակ՝ կարապէս էֆ. Գարագա-		54
եանէ	92	Տղայոց բուն, տես՝ ցերեկ ժամանակ
Նորօրինակ ընկալազիր մը	95	տղայոց բուն
Նորվէկեան եւ ձաքոնեան ձկնոր-		Տնտեսագիտական դասեր
սութիւն	157	15, 21, 41,
Նորածին մանկանց սեռունդը	272	89, 105
Նոր հրատարակութիւնն	88	Տնտես աղբար
Հաֆարի հիւանդութեան վրայ	213	Տնտեսն եւ բանասեղծութիւնը
Հափարն ինչ հետեւանեներ ունի սր-		50
դայոց համար	229	Տնտեսի բարեկամ 40, 87, 122, 146,
Ոչխարները , տես՝ բունս ոչխարները		165, 213, 238
բութել		Տնտեսի նամակագրութիւնն 123, 147,
Ոտքի կուտերը անհետացնելու դեղ	214	168, 214, 237, 258, 287
Ո՞րն է վճառակար մարդու համար	125	Տուն , տես՝ փոքրիկ Գէորգին տունը
Որդերը , տես՝ փայտ կրծող որդերը		Տուն կամ սենեակ վարձելու պայ-
ջնջել		մանի վրայ
Չվայլեր	58	115
Պայմանագրութիւնն՝ տուներու կամ		Յերեկ ժամանակ տղայոց բուն
խանութներու մասին	415	272
Պատասխանի պիտանի հարցմանց	59	Յորենի հիւանդութեան վրայ
Պատուատի եռոր գործիր մը	102	247
Պարապոյ ժամերու համար 174, 188,		Փայտ կրծող որդերը շնչելու միջոց
252, 255, 279		169
Պիտանի հարցումներ 19, 32, 60, 85,		Փոխադարձ օգնութիւն հիւանդու-
121, 144, 164, 212, 240, 251, 278		թեան դէմ
Պիտանի հարցումներու մասին	59	111, 155
» » արդիւնքը	170	Փողացաւ (բոււպողան)
Պոսկոր	244	252
Չուրն իբրեւ ըմբեկի	117	Փորհարութեան դեղ
Չրահեղձ անձանց տրուելիք օգնու-		254
թիւներն	203	Փոքրիկ Գէորգին աղօթքը
Չրոյ յատկութիւնը	284	18
Սանդուխներէն վեր ելելու արհեսը	273	Քարիլ եւ առողջութիւն
Սովորեք մասց	151, 172, 252	157
Վիճակագրական	286	Քացախսի վրայ , տես՝ կարեւոր դի-
Վրիպակ	161	սորութիւնն է. վ.
Տան ելմացուցի վրայ	8	Քրին արիւնելուն դէմ ազդու դեղ
Տան ծախուց կարգագրութիւնն	7	275
» » Տնտեսի		Քունս ոչխարները բութելու դեղ
Մրցանակին ի պատասխանի 141, 177		204